ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/34 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Արձագանք» արձանի տարածքի բարեկարգում) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.04.2021թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմինե Ստեփանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Խորեն Մնացականյան /գնահատող/
	Հրանտ Հովսեփյան /բացող/
	Գայանե Նազլուխանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Ավագ Շին 1» ՍՊԸ	tender-consult1@yandex.ru
2	«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ	artmashin@mail.ru
3	«ՎԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ	vanshingroup@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակիցներ՝ **«Ավագ Շին 1» ՍՊԸ**-ի և **«ՎԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ**-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.2 **«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա չեն (համակարգից հնարավոր չէ ներբեռնել) հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես բացակայում են՝ Հրավերի N 1 Հավելվածով նախատեսված գնման ընթացակարգին մասնակցելու Դիմում-հայտարարությունը, հայտի ապահովումը, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափա-բաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«Ավագ Շին 1» ՍՊԸ		«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ		«ՎԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	33113670	22075000	26490000	24500481	29400577	24841623	29809948

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 Հանձնաժողովի նիստը կասեցնել մինչև ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում մասնակիցների կողմից հայտի ապահովման բնօրինակի ներկայացումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2021թ մայիսի 4-ին, ժամը 15:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 04.05.2021թ. ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմինե Ստեփանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Խորեն Մնացականյան /գնահատող/
	Հրանտ Հովսեփյան /բացող/
	Գայանե Նազլուխանյան /բացող/
Բացակայում է՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

8. Հայտի ապահովման ներկայացման վերաբերյալ.

8.1 Մասնակիցները հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել են հայտի ապահովման բնօրինակները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

9.1 «Ավագ Շին 1» ՍՊԸ-ի և «ՎԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

10,1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝

կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

11. Հանձնաժողովի *հաջորդ* նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

11.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2021թ մայիսի 6-ին, ժամը 15:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 06.05.2021թ. ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմինե Ստեփանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Խորեն Մնացականյան /գնահատող/
	Հրանտ Հովսեփյան /բացող/
	Գայանե Նազլուխանյան /բացող/
Բացակայում է՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

12. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

12.1 «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

13. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

13.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Ավագ Շին 1» ՍՊԸ**-ին (ընտրված մասնակից);

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ**-ին:

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՎԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

14. Գնահատման արդյունքների մասին.

14.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն

անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արմինե Ստեփանյան /նախագահ/

---------- Խորեն Մնացականյան

---------- Հրանտ Հովսեփյան

---------- Գայանե Նազլուխանյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/